

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

6 6.17.1

6.17	Մշակութային ժառանգություն	6.17.2
6.17.1	Ծրագրի գործողությունների ազդեցությունը մշակութային ժառանգության վրա	6.17.2
6.17.2	Ազդեցության կանխատեսման մեթոդաբանություն	6.17.5
6.17.3	Հավանական ազդեցության կանխատեսվող ուժգնություն	6.17.8
6.17.4	Մշակութային ժառանգության հուշարձանների զգայունությունը	6.17.8
6.17.5	Մշակութային ժառանգության հուշարձանների նկատմամբ ազդեցությունների հավանական ուժգնությունը	6.17.9
6.17.6	Ազդեցությունների մեղմացում	6.17.13
6.17.7	Մոնիտորինգ և աուդիտ	6.17.17
6.17.8	Մնացորդային ազդեցություններ	6.17.20
6.17.9	Եզրակացություն	6.17.23

ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ

Աղյուսակ 6.17.1.	Փոփոխության մասշտաբի ուժգնություն	6.17.5
Աղյուսակ 6.17.2.	Մշակութային ժառանգության ռեսուրսի զգայունության մասշտաբը	6.17.6
Աղյուսակ 6.17.3.	Գնահատված մշակութային ժառանգության հուշարձանների վրա հավանական ազդեցությունների նշանակալիությունը	6.17.11
Աղյուսակ 6.17.4.	Մշակութային ժառանգության մոնիտորինգ և աուդիտ	6.17.17
Աղյուսակ 6.17.5.	Ազդեցությունների ամփոփում – Մշակութային ժառանգություն	6.17.22

6.17 Մշակութային ժառանգություն

Ամուլսարի Ծրագրի շրջանակներում մշակութային ժառանգության նկատմամբ տեղի ունեցող հնարավոր ազդեցությունները ներառում են հնագիտական վայրերի վրա ուղղակի ֆիզիկական ներգործություն՝ շինարարության և հանքարդյունահանման հետևանքով: Ծրագիրն իրականացվում է հարուստ հնագիտական տարածաշրջանում, որտեղ ավելի քան տասնհինգ հազար տարվա վաղեմության վկայություններ կան, որոնք ձգվում են վաղ միջնադարից մինչև մեր օրերը: Տարածաշրջանը, որը շրջապատում է Ծրագրի տարածքը, համակողմանի գիտական հետազոտության դեռևս չի ենթարկվել, և հնարավոր է, որ այս հետազոտության միջոցով բացահայտվի Հայաստանի նախապատմությունը, հատկապես պալեոլիթի և նեոլիթի ժամանակաշրջանները, որոնք լավ բացահայտված չեն այս տարածաշրջանում կամ Հայաստանում առհասարակ: Բացի սկզբնական հետազոտությունների արդյունքում բացահայտված վայրերից, Ծրագրի տարածքում կա նաև չբացահայտված հնագիտական վայրերի բացահայտման մեծ պոտենցիալ: Սկզբնական հետազոտությունների արդյունքում Ծրագրի տարածքում կամ մերձակայքում կառուցված ժառանգության կամ զբոսաշրջության վայրեր չեն հայտնաբերվել:

6.17.1 Ծրագրի գործողությունների ազդեցությունը մշակութային ժառանգության վրա

Գնահատումն ուղղված է հնագիտական մշակութային ժառանգության նկատմամբ հնարավոր ուղղակի ֆիզիկական ազդեցություններին, որոնք կարող են ֆիզիկական խաթարմամբ ներգործել տվյալ վայրի գիտական կամ բացահայտված մշակութային արժեքի վրա: Ուղղակի ֆիզիկական ազդեցության օրինակները ներառում են հողի խաթարումը և հնագիտական վայրի տեղահանումը հողի հարթեցման, փորվածքների կամ այլ՝ տարածքի նախապատրաստման աշխատանքների պատճառով: Ցանկացած վայրում, ուր հողախաթարման, կառուցապատման կամ աշխատանքային գործունեությունը ներխուժում է մշակութային ժառանգության ռեսուրսների տարածք, այս ուղղակի ֆիզիկական ազդեցությունը տեղի կունենա: Այսպիսով, ուղղակի ֆիզիկական ազդեցության տարածքն իր մեջ կներառի Ծրագրի հետևյալ բաղադրիչների զբաղեցրած տարածքները.

- Էրատո բացահանք
- Տիգրանես և Արտավազդես բացահանք
- Դատարկ ապարների լցակույտ (ԴԱԼ) և դրա հետ կապված նստվածքների ավազան
- Արդյունահանված հանքաքարի կույտ, մանրացված հանքաքարի և ցածր պարունակությամբ հանքաքարի կույտեր
- Հողի բերրի շերտի կույտեր
- Ջարդիչ կայան
- Լիցքավորման կայան
- Բեռնատարների կայանատեղի և վարչական գրասենյակներ
- Պայթուցիկների պահեստարան
- Հանքատար ճանապարհներ (մոտ 30 մետրանոց լայնությամբ միջանցք)
- Մերձատար ճանապարհներ (մոտ 10 մետրանոց լայնությամբ միջանցք)
- Վերգետնյա փոխակրիչ հոսքագիծ (մոտ 30 մ լայնությամբ միջանցք)
- Փոխակրիչի բեռնաթափման կառույց
- Կույտային տարրավազման հրապարակ, ներառյալ`
 - Կույտային տարրավազման հարթակ
 - Մշակման ավազան և հեղեղաջրերի ավազաններ
 - Կոնտակտային ջրերի ավազան
 - Ջրերի պասիվ մաքրման կայան
 - ԱԴՎ հանգույց
 - Գրասենյակներ և լաբորատորիաներ
- Կենցաղային կեղտաջրերի մաքրման կայաններ
- Կենցաղային և ոչ վտանգավոր արդյունաբերական թափոնների աղբավայր
- Կենցաղային և արտադրական թափոնների աղբավայր
- Շինարարության աշխատողների ժամանակավոր ճամբար
- Արվիա գետի պոմպակայան
- Ավազահանքեր և քարհանքեր շինանյութերի համար

□ Շինարարության համար նախատեսված ժամանակավոր տարածքներ

Բացահանքի այս մեծաքանակ բաղադրիչներից բացի, բացահանքի առավել փոքր ենթակառույցների շինարարությունը, ինչպես օրինակ՝ ջրագծերը և էլեկտրահաղորդման գծերը, ևս կարող են ազդել մշակութային ժառանգության հուշարձանների վրա: Այն հողատարածքները, որոնք ենթակա են հողի խաթարման, որպես շինարարության փուլային աշխատանքների և նախապատրաստման մաս, ինչպես շինհրապարակների տարածքը և շինարարության մերձատար ճանապարհները նույնպես կարող են հանգեցնել մշակութային ժառանգության հուշարձանների նկատմամբ ուղղակի ֆիզիկական ազդեցության: Քանի որ շինարարական բոլոր այս բաղադրիչների տեղադրությունը դեռևս հստակեցված չէ, նրանց առնչվող ազդեցությունները պետք է գնահատվեն իբրև հետ-ԲՄԱԳ համալրումների մաս,՝ համաձայն Ծրագրի մշակութային ժառանգության կառավարման Պլանի (CHMP):

Ծրագրի տարածքների մեծ մասում Ծրագրի շինարարության փուլում սպասվում են ուղղակի ֆիզիկական ազդեցություններ: Ծրագրի հետևանքով կխախտվի մոտավորապես 922 հեկտար հողատարածք: Հնագիտական հուշարձանների վրա շահագործման ազդեցությունները տեղի կունենան միայն նոր բացահանքների տարածքների սկզբնական բացման փուլում, քանի որ հնագիտական ռեսուրսները լեռնային վայրերում սովորաբար գտնվում են մակերեսին մոտ: Ծրագրի տարածքի շրջանակներում նախնական հետախուզական աշխատանքներով բացահայտված հավանական մշակութային ժառանգության հուշարձանների վրա ազդեցությունների մեծամասնությունից կարելի է խուսափել կամ մեղմացել նախքան շինարարական աշխատանքների իրականացումը: Հնագիտական մնացորդների համար, որոնք չեն հայտնաբերվել նախքան շինարարությունը, առկա է վնասման հավանականություն շինարարության կամ շահագործման փուլում: Նախապես չբացահայտված մշակութային ժառանգության հուշարձանների խաթարումը նվազեցնելու համար Ծրագիրը շինարարության և շահագործման փուլերում կիրառելու է Պատահական գտածոների ընթացակարգ:

Ծրագրի ազդակիր տարածքը մեծամասամբ չխախտված կամ տնտեսապես զարգացած տարածք է, որտեղ կան համայնքի կողմից ավանդական գյուղատնտեսական և այլ նպատակներով օգտագործվող՝ մշակութային ժառանգության արժեք ներկայացնող օբյեկտներ, շինություններ և լանդշաֆտի տարրեր: Ծրագրի ազդակիր տարածքին առնչվող մշակութային ծառայությունները ներկայացված են 6.20 բաժնում: Հավելված 8.6-ը (Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան) ներառում է Ծրագրի ազդակիր տարածքում ոչ նյութական արժեքների վերաբերյալ քննարկումները, իսկ Հավելված 8.16-ը (Համայնքների զարգացման պլան) ներառում է հողերի ավանդական օգտագործման (այդ թվում՝ անասնապահություն ամռանը) պահպանմանն աջակցելու պարտավորություն:

6.17.2 Ազդեցության կանխատեսման մեթոդաբանություն

Մշակութային ժառանգության վայրերի ուղղակի ֆիզիկական ազդեցության ուժգնությունը որոշվում է ֆիզիկական վնասի աստիճանով: Այսպիսի ազդեցությունները ուղղակի և մշտական են, եթե մեկ անգամ հնագիտական վայրը վնասվել է կամ ձևափոխվել, ապա իր կորցրած արժեքն այլևս չի կարող վերականգնվել: Մշակութային ժառանգության վայրերի վրա ուղղակի ազդեցությունների ուժգնությունը որոշելու մեթոդը հիմնված է ազդեցության գնահատման մեթոդաբանության մեջ, որը մանրամասնեցված է 6.2.2 Բաժնում: Մշակութային ժառանգության նկատմամբ ազդեցության ուժգնության մեթոդաբանության կիրառումն ամփոփված է Աղյուսակ 6.17.1-ում:

Աղյուսակ 6.17.1. Փոփոխության մասշտաբի ուժգնություն		
	Փոփոխության ուժգնություն	Փոփոխության նկարագրություն
1	Աննշան	Ֆիզիկական վիճակում ոչ մի տեսանելի փոփոխություն:
2	Ցածր	Հուշարձանի մի փոքր մաս կորսվել է կամ վնասվել՝ հանգեցնելով գիտական կամ մշակութային արժեքի կորստի:
3	Չափավոր	Հուշարձանի մի փոքր մաս կորսվել է կամ վնասվել՝ հանգեցնելով գիտական կամ մշակութային արժեքի էական կորստի:

Աղյուսակ 6.17.1. Փոփոխության մասշտաբի ուժգնություն		
	Փոփոխության ուժգնություն	Փոփոխության նկարագրություն
4	Բարձր	Ողջ տեղամասը վնասվել է կամ կորսվել՝ հանգեցնելով գիտական կամ մշակութային արժեքի ամբողջական կամ գրեթե ամբողջական կորստի:

Հնագիտական ժառանգության վրա ազդեցությունների հետևանքներ են համարվում Հայաստանի պատմության կամ նախապատմության մասին գիտական տեղեկատվության կորուստը և մշակութային սեփականության ոչնչացման իրավական հետևանքները, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին 2003թ.ի օրենքում (Բաժին 2.1.12) և Հայաստանի Ընդերքի մասին օրենսգրքում (Բաժին 2.1.2):

Ծրագրի տարածքում բացահայտված հուշարձանները բաժանվել են վեց զգայնության կատեգորիաների ըստ Աղյուսակ 6.17.2-ում սահմանված չափանիշի:

Աղյուսակ 6.17.2. Մշակութային ժառանգության ռեսուրսի զգայունության մասշտաբը		
	Ռեսուրսի զգայնությունը	Ռեսուրսի նկարագրություն
1	Զգնահատված	Հնագիտական խմբերի կամ արբանյակային պատկերների վերլուծությամբ նախապես բացահայտված հուշարձան, որը վերստին չի այցելվել կամ գնահատվել մշակութային ժառանգության զգայնության սանդղակով:
2	Աննշան ¹	Հուշարձան, որը գնահատվել է իբրև շատ փոքր գիտական և/կամ մշակութային արժեք կրող և/կամ շատ տարածված, որը կարելի է հեշտությամբ փոխարինել այլ հուշարձանների տվյալներով:

¹ Հատված 6.2-ում ազդեցության ուժգնության գնահատման մեթոդաբանությունը չի ներառում քննարկվող հուշարձանի ռեսուրսի զգայնության մակարդակը: Այս վերլուծության նպատակից ելնելով աննշան զգայնությամբ մշակութային ժառանգության ռեսուրսների նկատմամբ ազդեցությունների նշանակությունը գնահատվելու է մեկ աստիճանով ավելի ցածր քան նմանատիպ ազդեցությունների ուժգնությունը փոքր զգայնությամբ ռեսուրսների դեպքում: Արդյունքում առավել նշանակալի ազդեցությունը աննշան զգայնությամբ հուշարձանի նկատմամբ՝ փոքր է. բարձր ուժգնությամբ ազդեցությունը աննշան զգայնությամբ հուշարձանի նկատմամբ իրենից ներկայացնում է ցածր նշանակության ազդեցություն:

3	Փոքր	Հուշարձան, որը համարվել է գիտական կամ մշակութային արժեքի տեսանկյունից ցածր կարևորություն ունեցող: Կարող է փոխարինվել: Արժեքը պաշտոնապես ճանաչված չէ:
4	Միջին	Հուշարձան, որը համարվել է գիտական կամ մշակութային միջին կարևորություն ունեցող: Ունի փոխարինման սահմանափակ հնարավորություն: Արժեքը հաճախ ճանաչվում է տարածաշրջանի մակարդակով և ռեսուրսները կարող են արդեն իսկ պաշտպանված լինել տեղական, կամ պետական օրենսդրությամբ, բայց ճանաչված որպես տեղական նշանակության ռեսուրս:
5	Բարձր	Հուշարձան, որը համարվել է գիտական և մշակութային տեսանկյունից մեծ կարևորության արժեք ունեցող վայր: Ունի տեղափոխման խիստ սահմանափակ հնարավորություն: Արժեքը հաճախ ճանաչված է պետականորեն և ռեսուրսներն արդեն իսկ պաշտպանված են պետական օրենսդրությամբ: Բարձր զգայունությամբ հուշարձանները որակվում են որպես չկրկնվող մշակութային ժառանգություն, ինչպես որ սահմանված է ՄՖԿ կատարողական ստանդարտ 8-ում:
6	Շատ բարձր	Գիտական կամ մշակութային արժեքի տեսանկյունից շատ բարձր կարևորության հուշարձան: Առանց փոխարինման հնարավորության: Արժեքը հաճախ ճանաչված է միջազգայնորեն և ռեսուրսներն արդեն իսկ կարող են պաշտպանվել են պետական օրենսդրությամբ և միջազգային կոնվենցիաներով: Շատ բարձր զգայունությամբ վայրերը որակվում են որպես կարևորագույն մշակութային ժառանգություն, ինչպես որ սահմանված է ՄՖԿ կատարողականի ստանդարտ 8-ում:

Հավանական մշակութային ժառանգության բոլոր հուշարձանները, որոնք բացահայտվել են ԲՄԱԳ նախնական հետազոտություններով, հետազոտվել են դաշտային հետախուզական աշխատանքների արդյունքում մասնագիտացված հնագետների կողմից: Այնուամենայնիվ, առանց ներգործության արագ հետազոտման մեթոդները, որոնք կիրառվել են նախնական ուսումնասիրության ժամանակ, թույլ չեն տվել յուրաքանչյուր հավանական մշակութային ժառանգության հնավայրում գնահատել հուշարձանի զգայունությունը:

Դաշտային հետախուզական աշխատանքներով բացահայտված մշակութային ժառանգության հավանական 138 հուշարձանների զգայունությունը գնահատվել է Աղյուսակ 6.17.2-ում սահմանված չափորոշիչներով: Զգայունության բնորոշումն իրականացվել է հայկական հնագիտական խմբի կողմից դաշտային

հետախուզական աշխատանքներով բացահայտված հուշարձաններում լրացուցիչ ուսումնասիրություններով, ներառյալ գնահատման համար իրականացված պեղումները: ERM-ի հնագետները վերստին այցելել են Հայկական հնագիտական խմբի կողմից փաստագրված մի շարք հուշարձաններ և գնահատել հուշարձանների զգայնությունը՝ կիրառելով Աղյուսակ 6.17.2-ում ընդգծված սանդղակը: Զգայնության գնահատումն իրականացվել է հուշարձանների տարբեր տիպերի կարևորությունը բնորոշելու նպատակով, ինչպես նաև տեղեկացնելու Ծրագրի ԲՄԱԳ-ից (Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում) հետո ներկայացվող հանձնարարականները՝ հնարավոր ազդեցությունները մեղմելու համար: Մշակութային ժառանգության չգնահատված հուշարձանների զգայնությունը, որոնք կարող են Ծրագրի արդյունքում ազդեցություն կրել, բնորոշվելու է Ծրագրի Մշակութային ժառանգության կառավարման պլանով նախատեսված հնագիտական հետազոտությունների և գնահատումների շրջանակներում:

6.17.3 Հավանական ազդեցության կանխատեսվող ուժգնություն

Հավանական մշակութային ժառանգության բոլոր հուշարձանները, որոնք բացահայտվել են ԲՄԱԳ նախնական հետազոտություններով, հետազոտվել են դաշտային հետախուզական աշխատանքների արդյունքում մասնագիտացված հնագետների կողմից: Այնուամենայնիվ, առանց ներգործության արագ հետազոտման մեթոդները, որոնք կիրառվել են նախնական ուսումնասիրության ժամանակ, թույլ չեն տվել յուրաքանչյուր հավանական մշակութային ժառանգության հնավայրում գնահատել հուշարձանի զգայնությունը:

6.17.4 Մշակութային ժառանգության հուշարձանների զգայնությունը

Հայտնի հուշարձանների վրա հավանական ազդեցությունների ուժգնությունը Ծրագրի տարածքում հաստատվել է Ծրագրի նախագծային չափագրության վրա՝ մասնավորապես Ծրագրի առաջարկվող զբաղեցրած տարածքում հուշարձանների քարտեզագրմամբ: Քարտեզի թարմացման արդյունքում հայտնաբերվեց 81 հավանական հնագիտական հուշարձան Ծրագրի զբաղեցրած տարածքում կամ Ծրագրի զբաղեցրած տարածքից 50մ շառավղով: Հուշարձանները ներառում են.

- 1 միջին կարևորության հուշարձան

- 9 աննշան կարևորության հուշարձան, և
- 71 հուշարձան չգնահատված կարևորության:

70 հայտնի կամ հավանական հուշարձանների ակնհայտ կենտրոնական կետերը գտնվում են Ծրագրի զբաղեցրած տարածքում, ցույց տալով, որ այս բոլոր հուշարձանները կամ դրանցից գրեթե յուրաքանչյուրը կարող են ենթարկվել բարձր ուժգնության ազդեցության Ծրագրի շինարարության ընթացքում: Եվս 11 հայտնի կամ հավանական հուշարձանների ակնհայտ կենտրոնական կետերը տեղակայված են Ծրագրի զբաղեցրած տարածքից 50մ շառավղի սահմաններում: Ծրագրի զբաղեցրած տարածքում և նրա շրջակա 50մ շառավղով տարածքում տեղակայված հուշարձանների զգայնությունը և գիտական կարևորությունը գնահատվելու է իբրև հետ-ԲՍԱԳ-ի պարտականությունների մաս՝ ինչպես նկարագրված է Ծրագրի Մշակութային Ժառանգության Կառավարման Պլանում (CHMP):

6.17.5 Մշակութային ժառանգության հուշարձանների նկատմամբ ազդեցությունների հավանական ուժգնությունը

Մշակութային ժառանգության հուշարձանների վրա հավանական ազդեցությունների էական լինելը հիմնված է Ծրագրի ազդեցությունների ուժգնության և մշակութային ժառանգության ռեսուրսների զգայնության համատեղ աղյուսակների վրա:

Ընդհանուր առմամբ 81 հավանական հնագիտական հուշարձան կարող է Ծրագրի զարգացման արդյունքում հավանական ազդեցություն կրել:

Օգտագործելով Բաժին 6.2.2-ում նկարագրված գնահատման մեթոդաբանությունը, այս վայրերի զգայնությունը միավորվել է ազդեցության ուժգնության հետ, որոշելու համար ազդեցության նշանակությունը: Առաջարկվող Ծրագրի

բաղադրիչների շինարարությունը կարող է հանգեցնել հետևյալ ազդեցություններին²:

- **ԿՏՀ և հարակից կառույցներ.** Բարձր ուժգնության ազդեցություններ չգնահատված ազդեցության 45 հավանական հուշարձանների վրա, տեղակայված Ծրագրի զբաղեցրած տարածքում և չափավոր ազդեցություններ չգնահատված զգայնության հինգ հավանական հուշարձանների վրա Ծրագրի զբաղեցրած տարածքից 50մ շառավղով;
- **Էրատոյի և Տիգրանես-Արտավազդեսի բացահանքեր.** Բարձր ուժգնության ազդեցություններ ութ աննշան նշանակության ռեսուրսների և մեկ ցածր նշանակության ռեսուրսի վրա,
- **ԴԱԼ և հարակից կառույցներ.** Բարձր ուժգնության ազդեցություն աննշան զգայնության մեկ հուշարձանի վրա և տասներեք չգնահատված զգայնության հուշարձանների վրա: Չափավոր ուժգնության ազդեցություն չգնահատված զգայնության երկու հուշարձանների վրա, զբաղեցրած տարածքից 50մ սահմաններում, և
- **Փոխակրիչի միջանցք և մերձատար ճանապարհներ.** Բարձր ուժգնության ազդեցություններ չգնահատված զգայնության երեք հավանական հուշարձանների վրա և չափավոր ուժգնության մեկ ազդեցություն չգնահատված զգայնության երեք հավանական հուշարձանի վրա

Գնահատված զգայնության տասը մշակութային ժառանգության հուշարձանների վրա հավանական ազդեցությունների նշանակալիությունն ամփոփ ներկայացված է Աղյուսակ 6.17.3-ում և ցույց է տրված Նկար 4.19.1-ում:

² Հավանական մշակութային ժառանգության չգնահատված զգայնությամբ հուշարձանների վրա ազդեցությունների նշանակությունը գնահատել հնարավոր չէ, քանզի հուշարձանների զգայնության գնահատում չի իրականացվել:

Աղյուսակ 6.17.3. Գնահատված մշակութային ժառանգության հուշարձանների վրա հավանական ազդեցությունների նշանակալիությունը				
Տեղամասի համարը	Ծրագրի բաղադրիչի տեղամաս	Զգայունություն/կարևորություն	Ազդեցության ուժգնություն	Ազդեցության նշանակալիություն
79	ԴԱԼ	Աննշան	Միջին	Փոքր
85	Էրատոյի բացահանք	Աննշան	Բարձր	Փոքր
86	Էրատոյի բացահանք	Աննշան	Բարձր	Փոքր
87	Էրատոյի բացահանք	Փոքր	Բարձր	Չափավոր
88	Էրատոյի բացահանք	Աննշան	Բարձր	Փոքր
89	Էրատոյի բացահանք	Աննշան	Բարձր	Փոքր
90	Տիգրանես-Արտավազդեսի բացահանք	Աննշան	Բարձր	Փոքր
91	Տիգրանես-Արտավազդեսի բացահանք	Աննշան	Բարձր	Փոքր
92	Տիգրանես-Արտավազդեսի բացահանք	Աննշան	Բարձր	Փոքր
93	Տիգրանես-Արտավազդեսի բացահանք	Աննշան	Բարձր	Փոքր

Հավանական մշակութային ժառանգության հուշարձանների վրա ազդեցությունների մեծամասնությունը առաջ է գալու առաջարկվող ԿՏՀ և հարակից կառույցների շինարարությունից՝ ազդեցություն ունենալով չգնահատված զգայնության հիսուն հավանական հուշարձանների վրա: Ընդհանուր առմամբ, 45 հավանական մշակութային ժառանգության հուշարձանները տեղակայված են առաջարկվող ԿՏՀ-ի Ծրագրի զբաղեցրած տարածքում, մինչդեռ ևս հինգ հուշարձան գտնվում են ԿՏՀ-ի, ԱԴՎ հանգույցի, հողակույտերի, ջրատար խողովակաշարի և նրանց հետ առնչվող Ծրագրի զբաղեցրած տարածքներից 50մ շառավղով սահմաններում: ԿՏՀ-ի զբաղեցրած տարածքում գտնվող քառասուններեք հավանական հուշարձան ենթարկվելու են բարձր ուժգնության ազդեցությունների, մինչդեռ հինգ հավանական հուշարձան,

որոնք տեղակայված են ԿՏՀ-ից 50մ շառավղի սահմաններում, ենթարկվելու են միջին ուժգնության ազդեցությունների:

Առաջարկվող դատարկ ապարների լցակույտի շինարարությունը կարող է հանգեցնել չափավորից բարձր ուժգնության ազդեցությունների չգնահատված կարևորության 16 հուշարձանների նկատմամբ: Տասներեք հավանական հուշարձան գտնվում է Դատարկ ապարների լցակույտի՝ Ծրագրի զբաղեցրած տարածքում և ենթարկվելու է բարձր ուժգնության ազդեցությունների, մինչդեռ երկու հավանական հուշարձան՝ տեղակայված ԴԱԼ-ից 50մ շառավղի սահմաններում ենթարկվելու են միջին ուժգնության ազդեցությունների: Այս հուշարձանների գիտական կարևորությունը դաշտային հետախուզական աշխատանքների արդյունքում նրանց բացահայտումից հետո գնահատված չէ: Աննշան զգայնության մեկ հուշարձան փոքր նշանակալիության ազդեցության կենթարկվի ԴԱԼ-ի կառուցման արդյունքում:

Հայկական հնագիտական խմբի կողմից Փոխակրիչի միջանցքի, հիմնական մերձատար ճանապարհի, ԿՏՀ և ԴԱԼ-ի տարածքում հայտնաբերված հավանական հուշարձանների տիպերը ներառում են դամբարաններ, դամբարանախցեր, դամբարանաբլուրներ, ձկան ժայռապատկեր և նրան առնչվող տաճար, բրոնզեդարյան դամբարանաբլուրներ, Էնեոլիթյան արտեֆակտների սփռվածքներ, բրոնզեդարյան ամրաշինական կառույցներ, պատերի մնացորդներ և դիտակետ- աշտարակների հիմքեր: Հիմնվելով հայկական հնագիտական խմբի կողմից ներկայացված հավանական հուշարձանների տիպերի վրա մնացյալ հուշարձանների զգայնությունը, ամենայն հավանականությամբ տատանվում է աննշանից մինչև բարձր, ինչը կարող է հանգեցնել ցածրից մինչև անընդունելի նշանակության հավանական ազդեցությունների:

Դաշտային հետախուզական աշխատանքների արդյունքում այս հուշարձանների հայտնաբերումից ի վեր նրանց գիտական կարևորությունը չի գնահատվել, և հետևաբար, նրանց գիտական կարևորությունն անհայտ է: Այնուամենայնիվ, մի շարք հավանական ազդեցություն կրող հուշարձաններ բնորոշվել են իբրև հավանական դամբարաններ կամ դամբարանաբլուրներ: Եթե այս հուշարձանները

դամբարաններ են, դրանք պետք է դիտարկել իբրև բարձրից մինչև շատ բարձր զգայնության հուշարձաններ, և Ծրագրի բաղադրիչների ստեղծման արդյունքում բարձր ուժգնության ազդեցությունները հանգեցնելու են շատ բարձրից մինչև անընդունելի նշանակալիության ազդեցությունների:

6.17.6 Ազդեցությունների մեղմացում

Հետագա հետազոտություններն իրականացվել են հայտնի մշակութային ժառանգության հուշարձանների արժեքն ու մշակութային առնչություններն ավելի լավ հասկանալու համար: Ծրագրի մշակութային ժառանգության կառավարման պլանը նախագծվել է հատուկ կառավարման միջոցառումներ իրականացնելու նպատակով, որպեսզի նվազագույնի հասցվի հայտնի և անհայտ մշակութային ժառանգության հուշարձանների վրա ազդեցությունները: Այս պլանն իր մեջ կներառի Ծրագրի կողմից իրականացվելիք հետևյալ ընդհանուր մեղմացուցիչ միջոցառումները: Տարբեր մեղմացուցիչ ռազմավարություններ կկիրառվեն տարբեր հուշարձանների վրա՝ հիմնվելով նրանց զգայունության և հավանական ազդեցությունների ուժգնության վրա:

Մեղմացուցիչ միջոցառումներ մինչև շինարարություն սկսելը

(ա) Շրջանցում

Ուղղակի հնագիտական ազդեցությունների մեղմացման նախընտրելի միջոցներից է դրանց շրջանցումը՝ Ծրագրի նախագծման միջոցով: Հիմնվելով մշակութային ժառանգության հետազոտությունների արդյունքների վրա, Ծրագրի մի շարք բաղադրիչներ արդեն տեղափոխվել են՝ հնագիտական վայրերի վրա ազդեցություններից խուսափելու համար: Դրանց մեջ են մտնում կույտային տարրավազման հրապարակը և նախապես ծրագրված շինարարական մերձատար ճանապարհը, որն անցնում է Որոտան գետի հովտով: Այլընտրանքները քննարկվել են գլուխ 5-ում:

(բ) Լրացուցիչ մակերեսային հետախուզական աշխատանքներ

Առ այսօր Ծրագրի նախատեսվող զբաղեցրած տարածքի մոտ 80 տոկոսը ենթարկվել է հնագիտական որոշակի հետախուզության: Ծրագրի շրջակայքում արդեն իսկ բացահայտված հնագիտական հուշարձանների զգալի թիվը հուշում է, որ զբաղեցրած տարածքի չհետազոտված մասերում կարող են լինել լրացուցիչ,

դեռևս չբացահայտված հնագիտական հուշարձաններ: Այս տարածքներում իրականացվելու են լրացուցիչ մակերեսային հետախուզական աշխատանքներ: Լրացուցիչ հուշարձանների հայտնաբերման դեպքում ազդեցությունները մեղմացնելու շրջանցման միջոցառումներ կամ պեղումներ կիրականացվեն այս հուշարձաններում՝ հավանական ազդեցությունները մեղմելու և կառավարելու նպատակով:

(գ) Պեղումներ

Այն դեպքում, երբ հավանական հնագիտական հուշարձանները հնարավոր չլինի շրջանցել, այսինքն՝ այն ամբողջությամբ կամ մասամբ կկորսվի կամ կվնասվի, կիրականացվեն պեղումներ՝ զիտական ամբողջականությունը և այդ հուշարձանի նշանակությունը գնահատելու համար՝ գտածոների և մշակութային ինֆորմացիայի վերականգնման միջոցով: Ծրագիրը կցուցաբերի փուլային մոտեցում գնահատելիս, թե որ հուշարձանները ամբողջական պեղումների կարիք ունեն և ինչպիսին պիտի լինի դրանց պեղման տարածքը: Առաջարկվող Ծրագրի բաղադրիչների զբաղեցրած տարածքում գտնվող հավանական հուշարձանները կենթարկվեն հնագիտական դաշտային գնահատման³՝ հնագիտական հատկանիշների, կառույցների, շերտերի, գտածոների և այլ ռեսուրսների առկայությունը բնորոշելու համար, ինչը կիրականացվի սահմանափակ և թիրախավորված պեղումների ծրագրի միջոցով: Եթե նմանատիպ ռեսուրսներ առկա են, ապա դաշտային գնահատումը կբնորոշի նրանց բնույթը, տիրույթը և հնագիտական անխաթարությունը:

Առաջարկվող Ծրագրի բաղադրիչներից 50մ շառավղի սահմաններում գտնվող հավանական հուշարձանները կհետազոտվեն միևնույն եղանակով՝ նպատակ ունենալով հաստատել հուշարձանի առկայությունը և բացահայտել նրա սահմանները: Բացի այդ, բացահանքերի տարածքում ցածր և աննշան կարևորության հուշարձաններից նմուշ կենթարկվի հնագիտական գնահատման, որպեսզի հաստատվի այս հուշարձաններին վերագրված զգայնության աստիճանը: Պեղումների մարտավարություն կմշակվի պարզելու համար

³ “Standards and Guidance: Field Evaluation”, Institute for Archaeologists November 22, 2013.

նմանատիպ հուշարձանների խմբի պատկանելությունը հնագիտական հուշարձաններին, ժամանակակից քարակույտերին կամ հողակույտերին կամ էլ բնական լանդշաֆտի հատկանիշներին:

Հնագիտական պեղումները միջոց կծառայեն հաստատելու կամ հիմնավորելու համար հուշարձանի զգայնության աստիճանը: Եթե պարզվի, որ հուշարձանն ունի միջին կամ ավելի մեծ զգայնություն, ապա գիտական գրանցման և հետազոտման միջոցով տվյալների հավաքագրման պեղումներ կիրականացվեն, որպեսզի նվազեցվի կորուստը: Հուշարձանի պեղման առանձնահատուկ մարտավարություններ կմշակվեն և կիրականացվեն ՀՀ Մշակույթի Նախարարության խորհրդատվությամբ՝ մասնավորապես ՀՀ Մշակույթի Նախարարության կազմում Պատմա-մշակութային ժառանգության պահպանման ծառայության և Վայոց Ձորի և Սյունիքի մարզպետների հետ:

Պեղումները կիրականացվեն միջազգային փորձին համապատասխան՝ որակավորված հնագետների կողմից: Հուշարձանները կենթարկվեն կանոնավոր պեղումների, նախքան դրանք Ծրագրի գողծողություններից ազդեցություն կկրեն: Պեղումները կիրականացվեն ստրատիգրաֆիկ շերտերում՝ օգտագործելով ձեռքի գործիքներ: Հողը զգուշությամբ կհեռացվի գտածոների վրայից, որոնք կպահվեն հետագա ուսումնասիրության և պահպանման համար: Պեղումները կարձանագրվեն նկարներում, թվային լուսանկարներում և մանրամասն դաշտային նշումներում: Ըստ անհրաժեշտության, կիրականացվեն հատուկ անալիզներ, ինչպես օրինակ մարդու ոսկրաբանական կամ C14 թվագրության: Տվյալները և գտածոները կենթարկվեն անալիզների և կգրանցվեն հնագիտական զեկույցներում, ինչպես արտացոլում է ժամանակակից միջազգային փորձը: Պեղված հուշարձաններից ի հայտ եկած գտածոները և գիտական նմուշները կպահվեն համապատասխան տեղական թանգարաններում կամ համալսարաններում:

Շինարարության փուլի մեղմացման միջոցառումները. Պատահական գտածոների ընթացակարգ

Քանի որ առկա է Ծրագրի տարածքում չբացահայտված հնագիտական հուշարձանների հայտնաբերման հավանականությունը, մշակվել է Պատահական գտածոների ընթացակարգ: Ընթացակարգն ուղղված կլինի հողային աշխատանքների ընթացքում բացահայտվելիք բոլոր գտածոներին՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

- Համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
- Հուշարձանների գննության իրականացում, նախքան շինարարական աշխատանքների սկիզբը, երբ հողը մաքրված է ,
- Հնագետների տեղաբաշխումը շինարարության վայրերը վերահսկելու համար, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը հողային աշխատանքների իրականացման ընթացքում,
- Արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում և գնահատում հնագիտական մոնիտորինգի միջոցով;
- Անհրաժեշտության դեպքում պետական մարմինների ծանուցում,
- Պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շինարարական աշխատանքների ուշացումները, և
- Մոնիտորինգային գործունեության և պատահական գտածոների արձագանքման վերստուգիչ գրանցումների վարում:

Պատահական գտածոների ընթացակարգերը իրականացվելու են նաև հանքի շահագործման ընթացքում, սակայն միայն այն դեպքերում, երբ հողային աշխատանքները կարող են ազդել նախկինում անհայտ հնագիտական հուշարձանների վրա: Եթե Ծրագրի վերանախագծմամբ հնարավոր չլինի շրջանցել ցածր կամ աննշան մշակութային ժառանգության հուշարձանները, ապա

պատահական գտածոների ընթացակարգը կձառայի որպես այս մշակութային ժառանգության հուշարձանների վրա ազդեցությունների մեղմացման առաջնահերթ միջոց:

6.17.7 Մոնիտորինգ և աուդիտ

Մեղմացուցիչ միջոցառումների ռազմավարությունների արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ մոնիտորինգը և աուդիտի պլանվորումը սահմանված են Աղյուսակ 6.17.4-ում:

Աղյուսակ 6.17.4. Մշակութային ժառանգության մոնիտորինգ և աուդիտ		
Մշակութային ժառանգության աղբյուրներ		
Մոնիտորինգային մոտեցում	Սկզբնական վիճակ	Ծրագրի տարածքում մշակութային ժառանգության ոլորտի հետախուզություններն իրականացվել են 2010թ. սկզբին: Ծրագրի տարածքում իրականացվել է ընդամենը 6 հետիոտն դաշտային հետախուզություն: Այս հետազոտությունները բացահայտել են 487 հայտնի կամ հավանական մշակութային ժառանգության հուշարձան: Առաջարկվող Ծրագրի շինարարությունը կարող է ազդեցություն ունենալ 81 հավանական կամ հայտնի և անհայտ թվով չհայտնաբերված հուշարձանների վրա:
Էական ազդեցություններ		
Ուղղակի ֆիզիկական ազդեցություններ հայտնի և չբացահայտված հնագիտական հուշարձանների վրա		Շինարարության և շահագործման փուլի աշխատանքները կարող են էականորեն վնասել և/կամ ամբողջովին վերացնել 81 հայտնի կամ հավանական հնագիտական հուշարձան, որոնք գտնվում են Ծրագրի զբաղեցրած տարածքում կամ Ծրագրի զբաղեցրած տարածքից 50մ շառավղի սահմաններում: Շինարարության և շահագործման աշխատանքները կարող են վնաս հասցնել Ծրագրի տարածքում եղած չբացահայտված հնագիտական հուշարձաններին:
Հատուկ գործողություններ		
Մակարդակ 2 Կառավարման պլան	Մշակութային ժառանգության կառավարման պլանը (ՄԺԿՊ) սահմանում է քայլեր մշակութային ժառանգության հուշարձանների վրա Ծրագրի հավանական ազդեցությունների նվազեցման ուղղությամբ: ՄԺԿՊ-ի մեջ մտնում են մշակութային ժառանգության հուշարձանների պահպանության հետ կապված հետևյալ պարտավորությունները, որոնք հիմնված են Ծրագրի ԲՄԱԳ-ում նշված մեղմացուցիչ միջոցառումների վրա. <input type="checkbox"/> Հայտնի մշակութային ժառանգության հուշարձանների շրջանցում և նշագծում, <input type="checkbox"/> Լրացուցիչ մակերեսային հետախուզություն և հնագիտական գնահատում, և հնարավոր հնագիտական տվյալների հավաքագրմանն ուղղված պեղումներ, <input type="checkbox"/> Պատահական գտածոների ընթացակարգում արձանագրությունների և միջոցառումների կիրառում (մակարդակ 3 SSPS),	

	<ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> Ծրագրի անձնակազմի ապահովում մշակութային ժառանգության մասին իրազեկման դասընթացներով, և <input type="checkbox"/> Խորհրդակցություն շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ՀՀ Մշակույթի նախարարությունը, ինչպես նաև Վայոց Ձորի և Սյունիքի մարզպետների, Ջերմուկի և Գնդեվազի համայնքների ղեկավարների հետ: 		
<p>Մակարդակ 3 ՄԳԸ-ներ</p>	<p>ՄԺԿՊ 2-րդ մակարդակի պարտականությունները կիրականացվեն պատահական գտածոների ընթացակարգի (ՊԳԸ) միջոցով, և լրացուցիչ մակարդակ 3 ՄԳԸ-ներ կմշակվեն ՄԺԿՊ-ում նշված պարտականությունները բավարարելու համար: ՊԳԸ ապահովում է Ծրագրի հողային աշխատանքների հնագիտական մոնիտորինգի իրականացման և յուրաքանչյուր հավանական էական նշանակության մշակութային ժառանգության (պատահական գտածո) արձագանքելու գործընթացը, որը կարող է անսպասելիորեն հանդիպել Ծրագրի շինարարության կամ շահագործման ժամանակ: Լրացուցիչ մակարդակ 3 ՄԳԸ-ներ կմշակվեն ՄԺԿՊ պարտականություններն իրագործելու համար, կապված վայրի նշագծման և լրացուցիչ հետազոտության ու պեղումների հետ:</p>		
<p>Մշակութային մոնիտորինգի</p>	<p>Ժառանգության Ռազմավարություն</p>	<p>Մոնիտորինգ</p>	
<p>Ազդեցություններ հայտնի մշակութային ժառանգության հուշարձանների վրա</p>	<p>Շրջանցում վերանախագծման միջոցով և հայտնի մշակութային ժառանգության հուշարձանների նշագծում</p>	<p>Մշակութային ժառանգության հուշարձանների վրա ազդեցությունների մեղմացման համար առավել նախընտրելի միջոցը շրջանցելն է:</p>	<p>Ծրագրի մի շարք տարրեր, որոնք սկզբնապես գտնվում էին Որոտան գետի հովտում, տեղափոխվել են մշակութային ժառանգության վրա ազդեցություններից խուսափելու համար: Եթե լրացուցիչ հուշարձաններ հայտնաբերվեն Ծրագրի բաղադրիչներից 50մ շառավղով չուսումնասիրված տարածքում, ապա դրանք կնշագծվեն, հետագայում այդ վայրերը շրջանցելու համար:</p>
<p>Ազդեցությունները չբացահայտված հնագիտական հուշարձանների վրա</p>	<p>Մակերեսային հետախուզություն և պեղումներ</p>	<p>Ծրագրի մի շարք բաղադրիչներ հնագիտական հետախուզության չեն ենթարկվել: Հավանական չբացահայտված հնագիտական հուշարձանների վրա այս տարածքներում ազդեցությունները նվազեցնելու</p>	<p>Արհեստավարժ հնագետները կիրականացնեն առանց միջամտության, Ծրագրի բաղադրիչների հետիոտնային</p>

		<p>նպատակով հետախուզություն կիրականացվի:</p>	<p>ուսումնասիրություն: Այս ուսումնասիրություններն ուղղված կլինեն հնագիտական հուշարձանների վերգետնյա ցուցիչների բացահայտմանը: Եթե հայտնաբերվեն միջին կամ բարձր կարևորության հուշարձաններ, ապա լրացուցիչ պեղումներ իրականացնելու կարիք կարող է առաջանալ:</p>
	<p>Պատահական գտածոների ընթացակարգ/Հնագիտական մոնիտորինգ</p>	<p>Ծրագրի ՊԳԸ ներառում է պարտավորություն տեղում հնավայրում ունենալ հնագիտական վերահսկող(ներ) ողջ հողաշինարարական աշխատանքների ընթացքում: ՄԺԿՊ ներառում է պարտավորություն ապահովել Ծրագրի աշխատակազմին հնագիտական ռեսուրսների ճանաչման դասընթացով՝ աշխատակազմի կողմից հավանական մշակութային ռեսուրսների բացահայտման ունակությունը բարձրացնելու նպատակով:</p>	<p>Արհեստավարժ հնագետը (հնագետները) կվերահսկի բազմաթիվ շինարարական գործողություններ Ծրագրի տարածքում և կտրամադրի ցպահանջ աջակցություն Ծրագրի աշխատակազմի կողմից հավանական Պատահական գտածոների հայտնաբերման դեպքում: Ծրագրի աշխատակազմին կտրամադրվի հավանական մշակութային ժառանգությունների ճանաչման դասընթաց և ՊԳԸ-ում սահմանված ընթացակարգեր:</p>

6.17.8 Մնացորդային ազդեցություններ

Մշակութային ժառանգության հուշարձանների վրա մնացորդային անցանկալի ազդեցությունները դասակարգվում են աննշանից մինչև փոքր, ընդունելով, որ վերը նշված մեղմացուցիչ միջոցառումները իրականացվել են որպես Ծրագրի մշակութային ժառանգության կառավարման պլանի մաս: Սա նաև ենթադրում է, որ բարձր կամ շատ բարձր կարևորության չհայտնաբերված կամ չգնահատված հուշարձան Ծրագրի տարածքում չկա: Հավանական չմեղմացված ազդեցությունների նշանակությունը Ծրագրի զբաղեցրած տարածքում գնահատվել է իբրև մեկ չափավոր, ինը ցածր և յոթանասունմեկ անհայտ նշանակության:

Մեկ չափավոր ազդեցությունը տեղի կունենա Էրատոյի բացահանքի կառուցման հետևանքով: Ինը ցածր ազդեցությունները կհետևեն Էրատո և Տիգրանես-Արտավազդես բացահանքերի կառուցմանը և ԴԱԼ-ի տեղակայմանը: Մեղմացման միջոցառումների կիրառումը կնվազեցնի այս ազդեցությունների նշանակությունն առնվազն մեկ աստիճանով, չափավորից՝ փոքրի կամ փոքրից՝ աննշանի, կախված կիրառվող մեղմացման միջոցառումներից: Հուշարձանի պեղումները կարող են նվազեցնել ազդեցությունը մեկ աստիճանով՝ մեղմացնելով ազդեցությունը գիտական տվյալների հավաքագրման միջոցով: Ծրագրի նախագծի փոփոխման միջոցով հուշարձանների շրջանցումը կկանխի ուղղակի ֆիզիկական ազդեցությունները մշակութային ժառանգության հուշարձանների վրա՝ նվազեցնելով ազդեցությունների ուժգնությունը երկու աստիճանով՝ մինչև աննշան կամ չեզոք աստիճանի:

Անորոշ նշանակության ազդեցություններ կլինեն չգնահատված մշակութային ժառանգության ևս 71 հուշարձանների վրա նույնպես: Սրանք կլինեն Ծրագրի զբաղեցրած տարածքում ԿՏՀ-ի, ԱԴՎ հանգույցի, ԴԱԼ-ի, հիմնական մերձատար ճանապարհի, փոխակրիչի միջանցքի և Ծրագրի ենթակառուցվածքների հետ կապված այլ տարածքներում տեղակայված չգնահատված զգայության մշակութային ժառանգության հուշարձանների վրա ազդեցությունների արդյունքում: Փոխակրիչի միջանցքի և ԴԱԼ-ի հարևանությամբ գտնվող որոշ ենթակառուցվածքների հետազոտական աշխատանքների ընթացքում բացահայտված մի շարք հնագիտական տեղամասեր դրանց մշակութային և/կամ

գիտական կարևորությունը որոշելու նպատակով հնագետի կողմից չեն գնահատվել: Ի սկզբանե նշված տեղամասերը բացահայտվել են Ծրագրի ենթակառուցվածքների նախկին տեղանքների կամ սահմանների ուսումնասիրության ընթացքում և մինչև Նկ. 3.1-ում պատկերված փոխակրիչի ծրագիծը որոշելը: Հետևաբար, անկախ տեղամասերի նախատեսված գնահատման արդյունքներից, նախքան շինարարությունը սկսելը մշակութային ժառանգության վրա Ծրագրի չմեղմացված ազդեցությունները կարող են լինել մինչև անթույլատրելիի սահմաններում բարձր: Մեղմացման միջոցառումների իրականացումը առնվազն մեկ կամ ավելի աստիճանով կնվազեցնի այս ազդեցությունների ուժգնությունը՝ կախված միջոցառման տեսակից:

Աղյուսակ 6.17.5. Ազդեցությունների ամփոփում – Մշակութային ժառանգություն

Ազդեցություն	Աղբյուր	Առաջնային ընդունող(1)	Փուլ (2)		Նշանակվածություն (3)		Մեղմացման միջոցառումներ	Կառավարման պլան
			Շ	Ա	ԿԺ	ԵԺ		
			Չ	Ք	Զ	Չ		
Մշակութային ժառանգության վրա ուղղակի ֆիզիկական հետևանքներ	Պեղումներ, հարթեցում, և այլ հողային աշխատանքներ: Ծանրաքաշ մեքենաների երթևեկությունը հնագիտական հուշարձանների վրայով, հատկապես թաց եղանակին:	Չ Գ	Մ Ք	Մ Ք	Զ Չ	Զ Չ	<ul style="list-style-type: none"> Մակերեսային լրացուցիչ հետազոտություններ անհայտ հուշարձանների կարևորությունը գնահատելու համար, որոնք հնարավոր չէ շրջանցել Ծրագրի վերանախագծմամբ: Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում, ներառյալ անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցումը: Ծրագրի զբաղեցրած տարածքի փոփոխություն մշակութային ժառանգության հուշարձանները հնարավոր վայրերում շրջանցելու համար Պետական իշխանությունների կողմից մշակութային ժառանգության պեղումների իրականացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ՄՖԿ կատարողական ստանդարտ 8-ով սահմանված չափանիշների: Հայտնի հուշարձանների կամ բարձր տեսանելությամբ մեծ հավանականության տարածքների նշագծում, ինչը հնարավորություն կտա շրջանցել զգայուն տարածքները: 	Մշակութային ժառանգության կառավարման պլան՝ ներառյալ Պատահական գտածոների ընթացակարգը (Հավելված 8.17)
Մշակութային ժառանգության վրա անուղղակի ֆիզիկական հետևանքներ	Պայթեցում, տատանում. Ծանրաքաշ մեքենաների տեղափոխում հնագիտական հուշարձանների սերտ մերձակայքում	Չ Գ	Մ Ք	Մ Ք	Զ Չ	Զ Չ	<ul style="list-style-type: none"> Հայտնի հնագիտական վայրերի և բարձր պոտենցիալով տարածքների շուրջ համապատասխան բուֆերային գոտիների և արգելված տարածքների հիմնում: 	Մշակութային ժառանգության կառավարման պլան՝ ներառյալ Պատահական գտածոների ընթացակարգը (Հավելված 8.17)

Ծանոթագրություն՝
 (1) Առաջնային ընդունողներ: Ա = աշխատողներ, Բ = բնակիչներ, ՖԼ = ֆլորա, Ֆա = ֆաունա, Ազ = ազգային
 (2) Ծրագրի փուլ: Շ = շինարարություն, Աշխ = աշխատանքներ
 (3) Ակնկալվող նշանակության վարկանիշային աղյուսակ: ԿԺ = կարճաժամկետ՝ մեղմացուցիչ միջոցառումների իրականացմամբ, ԵԺ = երկարաժամկետ՝ մեղմացուցիչ միջոցառումների իրականացմամբ, Զ - = զգալի բացասական, Չ - = չափավոր բացասական, ԶԳ = չեզոք, Զ + = չափավոր բարելավված, Է + = էականորեն բարելավված

6.17.9 Եզրակացություն

Ընդհանուր առմամբ, հայտնի մշակութային ժառանգության վրա Ծրագրի ազդեցությունները կսահմանափակվեն աննշանից մինչև չափավոր՝ պայմանավորված այս մեղմացուցիչ միջոցառումների իրականացմամբ, որոնք համապատասխանում են ազգային և միջազգային կիրառելի չափանիշներին: Չգնահատված զգայնության հավանական մշակութային ժառանգության հուշարձանների վրա ազդեցությունները կսահմանվեն իբրև Ծրագրի հետ-ԲՄԱԳ պարտավորություններ: Ամուլսարի հանքավայրի շահագործման Ծրագիրը նաև դրական ազդեցություն կունենա Հայաստանի մշակութային ժառանգության վրա: Ծրագրի հետ առնչվող հնագիտական հայտնագործությունները և հետազոտությունները Ամուլսարի նախաձեռնության տարածքում զգալի ներդրում կունենան Հայաստանի անցյալի գիտական և մշակութային ընկալման համար: Զգալի ներուժի ամրապնդում կիրականացվի նաև գործունեության և միջազգային համագործակցության արդյունքում՝ հովանավորվելով Ծրագրի կողմից՝ ի կատարումն նրա մշակութային ժառանգության կառավարման ծրագրի: